Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 24-06-2025 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ 1
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00548
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2005-11-21
1.5 ՀՎՀՀ-ն		02580459
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10547512
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		r2e2.am
1.8 Էլեկտրոնային փոստը		Info@r2e2.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կարեն Ասատրյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	22	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Էներգախնայողության ծրագիր	312,723,066
	Էներգաարդյունավետության ծրագիր	121,250,886
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Էներգախնայողության ծրագիր	70,320,270
	Էներգաարդյունավետության ծրագիր	699,132,051
	Արևային լողացող ֆոտովոլտային կայանների զարգացման ծրագիր	5,710,858

	Մեծաթիվ բնակչությանն ուղղված էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մեծ ազդեցությամբ ցուցադրականփորձարարական միջոցառումների (GIZ) ծրագիր	212,896,729
	Նախապատրաստման աջակցության ծրագիր	19,776,148
	Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ-ում էներգախնայողության ծրագիր	733,388,304
	Խորհրդատվական ծառայություն	49,765,820
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Էներգաարդյունավետության ծրագիր	670,222,668	
Արևային լողացող ֆոտովոլտային կայանների զարգացման ծրագիր	1,020,000	
Մեծաթիվ բնակչությանն ուղղված էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մեծ ազդեցությամբ ցուցադրականփորձարարական միջոցառումների (GIZ) ծրագիր	58,274,658	
Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ-ում էներգախնայողության ծրագիր	398,774,890	
Խորհրդատվական ծառայություն	5,610,510	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,487,390,394	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1,133,902,726	

Նշումներ՝

իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____35____էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6
Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխության մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որն իր 2024թ. մայիսի 22-ին թվագրված եզրակացությամբ այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել է չձևափոխված կարծիք:

Grant Thornton

Ի լրումն՝ ղեկավարությունը վերաներկայացրել է ֆինանսական հաշվետվությունները, ինչպես բացատրվում է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 5-ում: Մենք աուդիտի ենք ենթարկել նաև այդ վերաներկայացումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն

հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Աուդիտի առաջադրանքի պատասխանատու

10 հունիսի 2025թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Տիգրան Ավինյան

Խորհրդի նախագահ

Հակոբ Վարդանյան

Խորհրդի անդամ

Գարեգին Բաղրամյան

Խորհրդի անդամ

Աշոտ Պետրոսյան

Խորհրդի անդամ

Նարեկ Տերյան

Խորհրդի անդամ

Միխայիլ Մարտիրոսյան

Խորհրդի անդամ

Աստղինե Պասոյան

Խորհրդի անդամ

Դավիթ Գրիգորյան

Խորհրդի անդամ

Արամ Մեյմարյան

Խորհրդի անդամ

Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Շնորհներից եկամուտ	6	728,138	111,036
Ծառայությունների մատուցումից եկամուտ	7	670,947	119,395
Այլ եկամուտ		8,453	13,136
Հատուցումներ աշխատակիցներին		(210,849)	(206,647)
Շինարարական ծախսեր	8	(568,478)	(52,744)
Մաշվածություն և ամորտիզացիա		(13,401)	(10,909)
Այլ ծախսեր	9	(71,206)	(58,619)
Ֆինանսական եկամուտ և ծախսեր, զուտ	10	34,162	140,702
Գործառնական արդյունք		**577,766**	**55,350**
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	11	35,314	(44,800)
Արդյունք մինչև հարկերը		**613,080**	**10,550**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	12	(82,254)	7,130
Տարվա զուտ արդյունք		**530,826**	**17,680**

	2024թ.	2023թ.
Զուտ ակտիվները տարվա սկզբում՝ մինչ վերաներկայացումը	314,474	285,758
Վերաներկայացում (տես Ծանոթագրություն 5)	-	11,036
Զուտ ակտիվները տարվա սկզբում՝ վերաներկայացումից հետո	314,474	296,794
Տարվա զուտ արդյունք	530,826	17,680
Զուտ ակտիվները տարվա վերջում	**845,300**	**314,474**

Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ	31 դեկտեմբերի 2023թ (վերաներկայացված)	1 հունվարի 2023թ (վերաներկայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	13	119,311	105,979	1,733
Ոչ նյութական ակտիվներ		9,666	472	33
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	452,827	377,037	679,474
Օգտագործման իրավինքի ձևով ակտիվներ		8,606	17,212	25,819
Տրամադրված փոխառություններ	14.2	1,461,428	1,702,116	889,207
Հետաձգված հարկային ակտիվներ	16	31,804	7,786	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2,083,642**	**2,210,602**	**1,596,266**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	17	15,440	29,122	125,819
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	509,781	467,274	583,594
Տրամադրված փոխառություններ	14.2	623,788	575,013	494,627
Ժամկետային ավանդներ	14.3	538,968	498,358	973,092
Դրամական միջոցներ և դրանց համարժեքեր	18	933,492	157,136	273,602
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**2,621,469**	**1,726,903**	**2,450,734**
Ընդամենը ակտիվներ		**4,705,111**	**3,937,505**	**4,047,000**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ	31 դեկտեմբերի 2023թ (վերաներկայացված)	1 հունվարի 2023թ (վերաներկայացված)
Զուտ ակտիվներ և պարտավորություններ				
Զուտ ակտիվներ				
Կուտակված արդյունք		845,300	314,474	296,794
Ընդամենը զուտ ակտիվներ		**845,300**	**314,474**	**296,794**
Պարտավորություններ				
Ոչ ընթացիկ				
Վարձակալության գծով պարտավորություններ		-	8,611	20,403
Ակտիվներին վերաբերող շնորհներ	19	139,133	122,267	123,821
Ստացված փոխառություններ	20	2,886,328	3,013,788	3,034,282
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**3,025,461**	**3,144,666**	**3,178,506**
Ընթացիկ				
Վարձակալության գծով պարտավորություններ		7,979	11,161	9,939
Ստացված փոխառություններ	20	98,750	77,591	85,036
Հետաձգված եկամուտ	22	506,947	362,660	440,939
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	114,795	26,297	35,786
Ընթացիկ հարկային պարտավորություն		105,879	656	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**834,350**	**478,365**	**571,700**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**4,705,111**	**3,937,505**	**4,047,000**

HAYRAPETYAN LIANA 7709860591

Digitally signed by HAYRAPETYAN LIANA 7709860591
Date: 2025.06.26 14:59:48 AMT

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 10-ին

Կարեն Մանասյան

Տնօրեն

Մարիամ Բուռնազյան

Ֆինանսական բաժնի ղեկավար

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղադրիչ մաս կազմող 12-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Տարվա արդյունք	530,826	9,853
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	13,401	10,909
Ֆինանսական ծախս	152,801	25,878
Ֆինանսական եկամուտ	(186,963)	(153,454)
Շահութահարկի գծով ծախս	82,254	-
Շնորհից եկամուտ	(728,138)	(111,036)
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի շարժը, զուտ	(4,958)	1,318
Պաշարների արժեզրկում	11,952	-
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ) վնաս	(35,314)	44,799
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**(164,139)**	**(171,733)**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(244,599)	432,119
Պաշարների փոփոխություն	1,730	(4,457)
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	90,036	(8,842)
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	**(316,972)**	**247,087**
Վճարված տոկոսներ	(22,559)	(23,257)
Վճարված շահութահարկ	(1,049)	-
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(340,580)**	**223,830**

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(10,043)	(5,707)
Ստացված շնորհներ	872,013	21,861
Ստացված տոկոսային եկամուտ	186,592	144,647
Ներդրված ավանդների շարժ, զուտ	(37,899)	477,361
Փոխառություններից շարժ, զուտ	194,799	(895,626)
Ներդրումային գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**1,205,462**	**(257,464)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր		
Վարձակալական պարտավորությունների մարում	(13,332)	(13,332)
Ստացված փոխառությունների մարում	(72,364)	(73,718)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(85,696)**	**(87,050)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	779,186	(120,684)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(2,830)	4,218
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	157,136	273,602
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	**933,492**	**157,136**

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը հիմնվել է Հայաստանի Հանրապետության կառավարության (Կառավարություն) 2005թ. ապրիլի 28-ի թիվ 799 որոշմամբ: Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է (Հիմնադիր):

Հիմնադրամի նպատակներն են.

- էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների իրականացմանը նպաստելը,
- էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում Հայաստանի շուկայի զարգացմանը խթանելը,
- շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեղնածին ազդեցության նվազեցմանը նպաստելը,
- էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգերի հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակումը,
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան լիազորություններ տրամադրվելու դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետ կնքվող պայմանագրերի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության անունից ոլորտի զարգացմանը խթանող վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման կազմակերպումը:

2024 թ.-ին Հիմնադրամը իրականացրել է հետևյալ հիմնական ծրագրերը.

- 2023թ.-ի օգոստոսին Հիմնադրամը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համատեղ մեկնարկել է «Մեծաթիվ բնակչությանն ուղղված էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի բարձր ազդեցությամբ ցուցադրական-փորձարարական» ծրագիրը: Ծրագիրն իրականացվել է ՀՀ Լոռու, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի մի շարք համայնքներում: Ծրագրի վերջնական շահառուներ են ընտրվել 25 հանրային շենքեր, որոնց վրա տեղադրվել են 20-150 կՎտ հզորությամբ 25 ֆոտովոլտային կայաններ, իսկ 5 հանրային շենքերում իրականացվել է նաև էներգախնայողության միջոցառում: Առաջնահերթությունը տրվել է կանանց և երիտասարդներին ծառայող հատուկ նշանակություն ունեցող հանրային ենթակառուցվածքներին, ինչպիսիք են մանկապարտեզները, բժշկական կենտրոնները, մշակութային և սպորտային կենտրոնները և այլն: Ծրագրի իրականացման արդյունքում տեղադրվել է շուրջ 1,100 կՎտ հզորությամբ արևային ՖՎ կայան՝ հանրային և հասարակական 25 շենքերի տանիքներին: Ծրագրի պարտադիր բաղադրիչ է հանդիսացել շուրջ 20%-ի չափով համաֆինանսավորում ընտրված համայնքների կողմից: Ներդրման չափը դոնորի կողմից կազմել է շուրջ 585,000 եվրո:

  2022թ.-ին Հիմնադրամը Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հետ համատեղ մեկնարկել է «Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. հասարակական շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների գործարկում և աջակցություն «կանաչ էներգետիկայի» զարգացմանը» ծրագիրը: Ծրագրի արժեքն է 2,071,277 ԱՄՆ դոլար (դրամաշնորհ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամից՝ 1,719,200 ԱՄՆ դոլար, համաֆինանսավորում ՀՀ կառավարությունից՝ 352,077 ԱՄՆ դոլար): Ծրագրի նպատակն է Հանրային նշանակության 13 օբյեկտում իրականացնել էներգախնայողության միջոցառումներ: Շինհավաքակցման աշխատանքներն իրականացվել են 2024 թվականի ընթացքում, իսկ դրանց ավարտից հետո օբյեկտներում իրականացվել են չափման և հավաստագրման աշխատանքներ: Բոլոր օբյեկտներում ապահովվել են հայտարարված էներգաարդյունավետության ցուցանիշները:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մելիք Ադամյան փ. 1:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 24 մարդ (2023թ.՝ 22 մարդ):

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Հիմնադրամը ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Հիմնադրամի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժութային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Հիմնադրամի ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- *«Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում»* (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- *«Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- *«Փոխանակելիության բացակայություն»* (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

4.2 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

4.3 Եկամուտ

Հիմնադրամի եկամուտները գոյանում են ստացված դրամաշնորհներից, ժամկետային ավանդների և տրվամադրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսներից, ծառայությունների մատուցումից և այլն:

Եկամուտ դրամաշնորհներից

Հիմնադրամի կողմից ստացված դրամաշնորհները, որոնց ստացման հետ կապված չեն գործում որևէ պայմաններ, ճանաչվում են որպես եկամուտ, երբ դառնում են ստացման ենթակա:

Ստացված դրամաշնորհները, որոնք նպատակաուղղված են որոշակի ծախսեր կատարելու համար, ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ընթացիկ ժամանակաշրջանում, իսկ հետագայում ճանաչվում են տարվա արդյունքում սիստեմատիկ հիմունքով այն նույն ժամանակաշրջանում, որոնցում ճանաչվում են ծախսերը:

Տոկոսային եկամուտ

Այս եկամուտը ներառում է ներդրված բանկային ավանդներից և տրամադրված փոխառություններից ստացված եկամուտ և ճանաչվում է՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Այս եկամուտը ներառվում է «Ֆինանսական եկամուտ» հոդվածում:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից եկամտը ներառում է էներգետիկ և խորհրդատվական ծառայություններ: էներգետիկ ծառայությունների շրջանակներում Հիմնադրամը իրականացնում է էներգախնայողության (ԷԽ) միջոցառումներ (նախագծման և շինարարական աշխատանքներ) և օժանդակ ծառայություններ (ներդրումային և էներգետիկ աուդիտ, ԷԽ ծրագրի մշակում, ներուժի հաշվարկ, տեխնիկական հսկողություն և այլն): Այն ճանաչվում է պայմանագրային պարտավորությունների կատարմանը զուգընթաց՝ ըստ հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց ավարտվածության աստիճանի:

4.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում: Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության

գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ,սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ	-	1-8 տարի

4.5 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը՝ որպես վարձակալ

Հիմնադրամը կնքում է վարձակալական պայմանագրեր գրասենյակային տարածքների համար: Գրասենյակային տարածքների գծով վարձակալական պայմանագրերը սովորաբար կնքվում 16 տարի ժամկետով, և դրանցից որոշներն ունեն երկարաձգման ժամկետներ:

Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության սահմանումը կիրառելու համար Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Հիմնադրամին,
- Հիմնադրամն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Հիմնադրամն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Հիմնադրամն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Հիմնադրամի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Հիմնադրամը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Հիմնադրամը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Հիմնադրամի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես

սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումն արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Հիմնադրամը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

4.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները և ժամկետային ավանդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային

կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ տարվա արդյունքում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 14-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.7 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Հիմնադրամի կողմից հավաքագրված դրամային միջոցները չեն դիտարկվում որպես Հիմնադրամի եկամուտ այն դեպքերում, երբ տվյալ ծրագրի կամ շնորհի իրականացումը չի կատարվում կամ վերահսկվում Հիմնադրամի կողմից: Նշված գումարները չեն ներառվում Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Շնորհը, որը Հիմնադրամին հատկացվել է ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով և որի գծով առկա չեն Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող կոնկրետ պայմաններ (տրամադրվել են Հիմնադրամի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ճանաչվում է այն ժամանակաշրջանի արդյունքում, երբ Հիմնադրամը ստանում է շնորհը:

4.8 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները

4.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.10 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ,Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.11 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

5 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Հիմնադրամը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

2024թ.-ին Հիմնադրամը վերաներկայացրել է 2023թ. և 2022թ. ֆինանսական հաշվետվությունները:

2023թ.-ի հունվարի 1-ի դրությամբ կուտակված արդյունքի վերաներկայացումը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Թիվ	1 հունվարի 2023թ. (մինչև վերաներկայացումը)	Վերաներկայացում	1 հունվարի 2023թ. (վերաներկայացումից հետո)
Կուտակված արդյունք	1	285,758	11,036	296,794

2023թ.-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վերաներկայացումները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	Թիվ	31 դեկտեմբերի 2023թ. (մինչև վերաներկայացումը)	Վերաներկայացում	31 դեկտեմբերի 2023թ. (վերաներկայացումից հետո)
Հիմնական միջոցներ	2	4,699	101,280	105,979
Պաշարներ	2	130,402	(101,280)	29,122

Մեկնաբանություններ

1) Նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող դրամաշնորհների եկամտագրման ճշգրտում:

2) Լողացող ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների շրջանակներում պաշարների կապիտալացում (ճշգրտում) հիմնական միջոցներին:

Կատարվել են նաև 2023թ.-ի եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվության որոշ հոդվածների վերադասակարգումներ՝ ընթացիկ տարվա հետ տեղեկատվության համադրելիությունն ապահովելու նպատակով:

6 Շնորհներից եկամուտ

	2024թ.	2023թ.
Հետաձգված եկամտի օգտագործումից (տե՛ս Ծանոթագրություն 22)	727,985	110,410
Ակտիվներին վերաբերող շնորհներից (տե՛ս Ծանոթագրություն 19)	153	626
	728,138	**111,036**

7 Ծառայությունների մատուցումից եկամուտ

	2024թ.	2023թ.
Էներգետիկ ծառայություններ	625,314	88,236
Խորհրդատվական ծառայություններ	45,633	31,159
	670,947	**119,395**

Էներգետիկ ծառայությունների գծով ծառայությունների մատուցումից եկամտի աճը հիմնական պայմանավորված է «Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. Հասարակական շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների գործարկում և «Կանաչ էներգետիկայի» խթանում» ծրագրի շրջանակներում ՀՀ հանրային օբյեկտներին մատուցված էներգախնայողության ծառայությունների դիմաց ստացված եկամտով, որը 2024թ.-ին կազմել է 597,832 հազար դրամ (2023թ.՝0):

8 Շինարարական ծախսեր

2024թ.-ի ընթացքում «Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. Հանրային շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների ներդրում և «Կանաչ էներգիայի» խթանում» ծրագրի շրջանակներում Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից ստացված դրամաշնորհի միջոցներով իրականացվել է հանրային նշանակության 13 շենքերի

էլեկտրախնայողությանն ուղղված միջոցառումներ: Շինարարական աշխատանքները իրականացվել են կապալառու կազմակերպությունների միջոցով:

9 Այլ ծախսեր

	2024թ.	2023թ.
Աուդիտի և խորհրդատվական ծախսեր	23,355	11,121
Գործուղման և ներկայացուցչական ծսխսեր	15,033	3,824
Գրասենյակային ծախսեր	12,476	11,323
Պաշարների արժեզրկման գծով ծախս	11,952	-
Այլ ծախսեր	8,390	32,351
	71,206	**58,619**

10 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2024թ.	2023թ.
Ֆինանսական եկամուտ տրված փոխառություններից	138,826	104,799
Ֆինանսական եկամուտ ավանդներից և բանկային մնացորդներից	48,137	61,781
Ընդամենը ֆինանսական եկամուտ	**186,963**	**166,580**
Ֆինանսական ծախսեր փոխառությունների գծով	22,626	23,116
Ֆինանսական ծախսեր վարձակալության գծով	1,539	2,762
Ֆինանսական ծախսեր դեբիտորների զեղչումից	128,636	-
Ընդամենը ֆինանսական ծախսեր	**152,801**	**25,878**
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախսեր)	**34,162**	**140,702**

Երկարաժամկետ դեբիտորական պարտքի իրական արժեքը, որն անտոկոս է, գնահատվել է որպես բոլոր ապագա դրամական միջոցների մուտքերի ներկա արժեք՝ զեղչելով համանման պարտքային գործիքների համար շուկայում գործող տոկոսադրույքով:

11 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)

	2024թ.	2023թ.
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		
Ժամկետային ավանդներ	2,711	(3,640)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(110)	(124)
Դրամական միջոցներ և համարժեքեր	(2,830)	4,218
Ստացված փոխառություններ	34,004	(45,245)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,539	(9)
	35,314	**(44,800)**

12 Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	(106,272)	(656)
Հետաձգված հարկ	24,018	7,786
Ընդամենը շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	**(82,254)**	**7,130**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	613,080		10,550	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	110,354	18.0	1,899	18.0
Չհարկվող եկամուտ, զուտ	(28,100)	(4.6)	(9,029)	**(85.6)**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	**82,254**	**13.4**	**(7,130)**	**(67.6)**

13 Հիմնական միջոցներ

	Մեքենաներ,սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	367,756	-	367,756
Ավելացում	4,999	101,280	106,279
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**372,755**	**101,280**	**474,035**
Ավելացում	16,526	-	16,526
Օտարում	(16,419)	-	(16,419)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**372,862**	**101,280**	**474,142**
Կուտակված մաշվածություն			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	366,024	-	366,024
Տարվա հաշվարկ	2,032	-	2,032
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**368,056**	**-**	**368,056**
Տարվա հաշվարկ	3,194	-	3,194
Օտարման հետևանքով դուրսգրում	(16,419)	-	(16,419)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**354,831**	**-**	**354,831**
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,699**	**101,280**	**105,979**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**18,031**	**101,280**	**119,311**

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

14 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

14.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.6-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ	2,085,216	2,277,129
Ժամկետային ավանդներ	538,968	498,358
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	465,278	833,698
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	933,492	157,136
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**4,022,954**	**3,766,321**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	429,319	-
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**429,319**	**-**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**4,452,273**	**3,766,321**

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	2,985,078	3,091,379
Վարձակալության գծով պարտավորություններ	7,979	19,772
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	91,013	16,916
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	**3,084,070**	**3,128,067**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**3,084,070**	**3,128,067**

14.2 Տրամադրված փոխառություններ

Ստացողի անվանում	Փոխառության մնացորդը առ 31 դեկտեմբերի			
	Ոչ ընթացիկ		Ընթացիկ	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ	262,378	321,228	90,572	93,051
Էվոկաբանկ ՓԲԸ	114,202	145,309	31,885	32,055
Ֆասթ Բանկ ՓԲԸ	5,316	6,645	1,357	1,370
ԱԿԲԱ Լիզինգ ՎԿ ՓԲԸ	397,212	428,927	181,017	166,766
Արմենիան Լիզինգ Քամփնի ՈՒՎԿ ՓԲԸ	209,566	296,729	139,275	125,093
Ագրոլիզինգ ԼՎԿ ՍՊԸ	348,820	308,845	90,685	77,644
Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ	83,780	153,567	70,054	70,245
Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ	60,862	58,225	18,943	14,653
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(20,708)	(17,359)	-	(5,864)
	1,461,428	**1,702,116**	**623,788**	**575,013**

Տրամադրված փոխառությունների վերադարձելիության ռիսկը կրում են բանկերը և վարկային կազմակերպությունները: Փոխառությունները տրամադրվել են 3-9% տոկոսադրույքով, առավելագույնը 8 տարի մարման ժամկետով:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Պարտքային կորուստների գծով պահուստը տարեսկզբին	23,223	15,091
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում (ապաճանաչում)	(2,515)	8,132
Պարտքային կորուստների գծով պահուստը տարեվերջին	**20,708**	**23,223**

14.3 Ժամկետային ավանդներ

	31 դեկտեմբերի 2024թ	31 դեկտեմբերի 2023թ
Ավանդներ	538,968	500,958
Ակնկալվող պարտքային կորուստ	-	(2,600)
Ընդամենը	**538,968**	**498,358**

Ստորև ներկայացված են ժամկետային ավանդների համար գործող պայմանները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Արժույթ	Անվանական տոկոսադրույք (%)	Մարման տարի	Անվանական արժեք	Հաշվեկշռային արժեք
Հայկական առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	3.90	2025թ.	420,000	420,000
Հայկական առևտրային բանկեր	ՀՀ դրամ	7.70-8.50	2025թ	118,968	118,968
				538,968	**538,968**

Ստորև ներկայացված են ժամկետային ավանդների համար գործող պայմանները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Արժույթ	Անվանական տոկոսադրույք (%)	Մարման տարի	Անվանական արժեք	Հաշվեկշռային արժեք
Հայկական առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	3.90	2025թ.	420,000	417,400
Հայկական առևտրային բանկեր	ՀՀ դրամ	7.70-8.50	2024թ.	80,958	80,958
				500,958	**498,358**

Ստորև ներկայացված է ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի շարժը՝

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	**(2,600)**	**(8,826**)
Հակադարձում	2,600	6,226
Տարեվերջի մնացորդ	**-**	**(2,600)**

15 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ոչ ընթացիկ		
Դեբիտորական պարտքեր էներգախնայողության ներդրումներից	452,827	377,037
	452,827	**377,037**
Ընթացիկ		
Դեբիտորական պարտքեր էներգախնայողության ներդրումներից	411,991	415,978
Տրված կանխավճարներ	67,590	24,030
Այլ դեբիտորական պարտքեր	41,174	40,683
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(10,974)	(13,417)
	509,781	**467,274**
Ընդամենը կանխավճարներ և դեբիտորական պարտքեր	**962,608**	**844,311**

	Ոչ ընթացիկ դեբիտորական պարտքերի մնացորդը առ 31 դեկտեմբերի			
	Անվանական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Դեբիտորական պարտքեր էներգախնայողության ներդրումներից	**581,463**	**377,037**	**452,827**	**377,037**

2024թ. դեբիտորական պարտքեր էներգախնայողության ներդրումներից հոդվածից 473,667 հազար ՀՀ դրամը (2023թ.՝0) վերաբերում է «Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. Հասարակական շենքերում

էներգախնայողության բարձրացման մեխանիզմների գործարկում և «Կանաչ էներգետիկայի» խթանում» ծրագրի շրջանակներում ՀՀ հանրային օբյեկտներին մատուցված էներգախնայողության ծառայությունների դիմաց առաջացած դեբիտորներին: Ծրագրի չափորոշումներին համապատասխանող 13 հանրային օբյեկտներում իրականացվել են էներգաարդյունավետ միջոցառումների շինհավաքակցման աշխատանքներ: Նշված դեբիտորական պարտքերի մարման ժամկետները կազմում են 5-9 տարի, իսկ իրական արժեքը հաշվարկվել է՝ զեղչելով դրամական հոսքերը 8.1 տոկոսադրույքով:

16 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	7,786	-
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 12)	24,018	7,786
Տարեվերջի մնացորդ	**31,804**	**7,786**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Չօգտագործված արձակուրդային պահուստ	2,722	225	2,947
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	5,064	23,793	28,857
	7,786	**24,018**	**31,804**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	**7,786**	**24,018**	**31,804**

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Չօգտագործված արձակուրդային պահուստ		2,722	2,722
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ		5,064	5,064
	-	**7,786**	**7,786**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	-	**7,786**	**7,786**

17 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հումք և նյութեր	14,268	27,603
Վառելիք	1,172	1,519
Ընդամենը պաշարներ	**15,440**	**29,122**

18 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները բանկերում: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկային հաշիվներ ազգային արժույթով	849,236	81,293
Բանկային հաշիվներ արտարժույթով	84,256	75,843
Ընդամենը դրամական միջոցներ	**933,492**	**157,136**

Տե՛ս Ծանոթագրություն 26՝ դրամական միջոցների արժույթների բացահայտման համար:

19 Ակտիվների վերաբերվող շնորհներ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	122,267	123,821
Ավելացում	17,019	127
Տարվա ընթացքում օգտագործում (տե՛ս Ծանոթագրություն 6)	(153)	(626)
Տեղափոխում հետաձգված եկամուտ	-	(1,055)
Տարեվերջի մնացորդ	**139,133**	**122,267**

20 Ստացված փոխառություններ

Փոխատուի անվանում						Մնացորդը դեկտեմբերի 31		
						2024թ.		
	Մայր գումար	Ստացման արժույթը	Ստացման ամսաթիվ	Մարման ամսաթիվ	Տոկոսա-դրույք %	Մայր գումար	Տոկոս	գ
ՀՀ ֆինանսների նախարարություն	1,740,568	ՀՀ դրամ	30.07.2012թ	10.11.2045թ.	0.75	1,423,858	1,520	1,45
ՀՀ ֆինանսների նախարարություն	4,847	ԱՄՆ դոլար	30.07.2012թ	10.11.2045թ.	0.75	1,557,605	2,095	1,62
Ընդամենը						**2,981,463**	**3,615**	**3,08**

Ստացված փոխառությունները ֆինանսական միջոցներ են, որոնք, համաձայն Հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարությ
պայմանագրի, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել են Հիմնադրամի կառավարմանը «Էներգախնայողությ
նպատակով: Հիմնադրամը ծրագրի շրջանակներում հանրային նշանակության շինություններում էներգախնայողության ներդրո
իրականացնելու նպատակով իր անունից պայմանագրեր է կնքում կապալառուների հետ և միաժամանակ էներգախնայողությ
պայմանագիր կնքում հանրային օբյեկտների հետ, որով սահմանվում է հանրային օբյեկտներին մատուցվելիք ծառայություններ
ժամանակացույցը:

Հիմնադրամի արտարժութային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 26-

21 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	74,617	853
Ստացված կանխավճարներ	23,486	2,289
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	16,396	16,063
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	296	7,092
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**114,795**	**26,297**

22 Հետաձգված եկամուտ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	362,660	440,940
Տարվա ընթացքում ստացված միջոցներ	872,272	31,075
Տեղափոխում ակտիվների վերաբերող շնորհներ զուտ	-	1,055
Տարվա ընթացքում օգտագործում (տե՛ս Ծանոթագրություն 6)	(727,985)	(110,410)
Տարեվերջի մնացորդ	**506,947**	**362,660**

Տարեվերջի դրությամբ մնացորդներն ըստ գործընկերների ներկայացված են ստորև.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Գերմանական միջազգային համագործակցության կազմակերպություն	116,818	714
Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ	64,418	-
Մասդար Հայաստան 1 ՓԲԸ	320,000	320,000
Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ	-	41,946
Այլ	5,711	-
	506,947	**362,660**

Հիմնադրամի, Մասդար Հայաստան 1 ՓԲԸ-ի և Արագածոտնի մարզի Թալին համայնքի միջև 2021թ.-ի նոյեմբերի 18-ին կնքված նվիրաբերության պայմանագրի շրջանակներում Հիմնադրամը պարտավորվում է Մասդար Հայաստան 1 ՓԲԸ-ից ստացված 320 մլն դրամ նվիրաբերության գումարը փոխանցել համայնքին, պայմանագրով նախատեսված պայմանները բավարարելուց հետո: Նվիրաբերության պայմանագրի շրջանակներում ստացված դրամական միջոցները դեռ չեն փոխանցվել համայնքին: Համայնքի կողմից ներկայացվել են զարգացման ծրագրեր, որոնք ուսումնասիրվել են Հիմնադրամի կողմից: Փոխանցման գործընթացը չի իրականացվել, քանի որ Վերահսկող հանձնաժողով չի ստեղծվել:

Տարվա ընթացքում ստացված միջոցներն ըստ աղբյուրների ներկայացված են ստորև.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ	652,544	-
Գերմանական միջազգային համագործակցության կազմակերպություն	212,897	5,644
Կանաչ Կլիմայի Հիմնադրամ	-	9,214
Այլ	6,831	16,217
	872,272	**31,075**

23 Կապակցված կողմեր

Հիմնադրամի հիմնադիր և վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը:

23.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Մնացորդներ	2024թ.	2023թ.
Ստացված փոխառություններ	2,985,078	3,091,379

Գործարքներ	2024թ.	2023թ.
Փոխառությունների մարում	72,364	73,042
Տոկոսային ծախս	22,626	23,116

23.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	21,563	22,018
Ընդամենը	**21,563**	**22,018**

24 Պարտավորվածություններ

24.1 Իրավական պարտավորվածություններ

ՀՀ կառավարության 2012թ.-ի հուլիսի 19-ի N 900-Ն որոշման հիման վրա՝ ՀՀ համայնքներում «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի (այսուհետ՝ ԳՏՏՋ ԾԻԳ) կողմից իրականացվող՝ գյուղական կարողությունների ստեղծման ծրագրով գազատարների կառուցման նպատակով 2012թ.-ին առանձին համայնքների փոխարեն համաֆինանսավորման պարտավորություններն ապահովելու համար ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի»-ի միջև 2012թ.-ի նոյեմբերի 15-ին կնքված վարկային պայմանագրով ՀՀ պետական բյուջեից 2012թ.-ի դեկտեմբերի 25-ին Հիմնադրամին հատկացվել էր 249,300 հազար ՀՀ դրամ գումարի բյուջետային վարկ՝ տարեկան 0.1 տոկոս դրույքաչափով և վարկի մարման վերջնաժամկետ է սահմանվել՝ 2022թ.-ի դեկտեմբերի 31-ը: Պայմանագրի շրջանակներում ԳՏՏՋ ԾԻԳ-ի կողմից առանձին համայնքների հետ կնքվել են համապատասխան փոխառության պայմանագրեր՝ պայմանագրով սահմանված նույն պայմաններով: 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պարտավորությունը կազմել է 208,111,159.1 ՀՀ դրամ, որից 206,418,107.1 ՀՀ դրամը՝ հիմնական գումար, իսկ 1,693,052.0 ՀՀ դրամը՝ հաշվարկված տոկոսագումար: Համաձայն 2025թ.-ի մայիսի 23-ի Հիմնադրամին ուղված ՀՀ ֆինանսների նախարարության գրության՝ ներկայացվել է վարկային պարտավորությունները կատարելու պահանջ:

25 Պայմանականություններ

25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի

ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

26 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

26.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի:

Արտարժույթի ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամն իր ազատ միջոցների մի մասը պահում է արտարժույթով, և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Բանկային ավանդներ	118,968	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	40	877
Դրամական միջոցներ և դրանց համարժեքեր	65,089	19,167
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**184,097**	**20,044**
Ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	1,559,699	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**1,559,699**	**-**
Զուտ արդյունք	**(1,375,602)**	**20,044**

Հոդված

31 դեկտեմբերի 2023թ.	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Բանկային ավանդներ	80,958	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,290	677
Դրամական միջոցներ և դրանց համարժեքեր	61,369	14,474
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**145,617**	**15,151**
Ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	1,631,158	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**1,631,158**	**-**
Զուտ արդյունք	**(1,485,541)**	**15,151**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը՝

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Տարվա արդյունք	(137,560)	(148,554)	2,004	1,515
	(137,560)	**(148,554)**	**2,004**	**1,515**

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

26.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի բանկային հաշիվների մնացորդները կազմում էին համապատասխանաբար 933,492 հազար ՀՀ դրամ և 157,136 հազար ՀՀ դրամ, ինչը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են ընդհանուր ակտիվներով տասը խոշոր հայկական բանկերից հանդիսացող բանկերում, և Հիմնադրամը չի ակնկալում, որ այդ բանկերը չեն կատարի իրենց պայմանագրային պարտականությունները: Հիմնադրամի գնահատմամբ բանկային հաշիվների մնացորդների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել, ինչը հիմնականում պայմանավորված է վերջիններիս կարճաժամկետ բնույթով:

Տրամադրված փոխառություններ

Այս ռիսկի ազդեցությունն առաջանում է ֆինանսական միջնորդ կազմակերպություններին և առևտրային բանկերին տրամադրված փոխառություններից, որոնք ապահովված չեն:

Ղեկավարության համոզմամբ տրամադրված փոխառություններն ամբողջովին վերականգնելի են: Տրամադրված փոխառությունների վերադարձելիության ռիսկը կրում է վարկային կազմակերպությունը:

Փոխառությունների մասով 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը ստեղծել է ակնկալվող պարտքային պահուստ՝ 20,708 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 23,223 հազար ՀՀ դրամ):

26.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:

2024թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)				
Մինչև 6 ամիս	74,617	7,979	36,622	119,218
6 ամսից մինչև 1 տարի	16,396	-	62,128	78,524
1-5 տարի	-	-	732,449	732,449
Ավելի քան 5 տարի	-	-	2,153,879	2,153,879
	91,013	**7,979**	**2,985,078**	**3,084,070**

2023թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)				
Մինչև 6 ամիս	853	4,801	38,795	44,449
6 ամսից մինչև 1 տարի	16,063	6,360	38,795	61,219
1-5 տարի		8,611	688,656	697,267
Ավելի քան 5 տարի		-	2,325,132	2,325,132
	16,916	**19,772**	**3,091,379**	**3,128,067**

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և դեբիտորական պարտքերը:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 26.06.2025 15:09